



# NEWS

*Treasurer and Tax Collector Keith Knox*

437 Kenneth Hahn Hall of Administration, 500 West Temple Street, Los Angeles, CA 90012

**Մարտի 16, 2020թ.**

## ***Ենթակա է անմիջապես հրապարակման***

### **Լոս Անջելեսի շրջանի գանձապետարանի տեսուչն ու հարկահավաքը գույքահարկի վճարումները անձամբ չի ընդունելու**

Երկուշաբթի, մարտի 16-ին հանրության համար Լոս Անջելեսի վարչաշրջանի բոլոր շենքերի փակման հետ կապված և մինչև հետագա ծանուցումը, Լոս Անջելեսի շրջանի գանձապահն ու հարկահավաքը անձամբ չի ընդունի հարկային վճարումներ և չի տրամադրի հարկային կամ բիզնեսի արտոնագրման ծառայություններ: Այժմ փակ հաստատություններից է նաև Քենետ Յան վարչական տունը, որտեղ տեղակայված են գերատեսչության գանձապահները, փակ են նաև բիզնեսի արտոնագրման ծառայություններ տրամադրող օժանդակ գրասենյակները Լանքաստերում և Վալենսիայում: Դա արվում է որպես կանխարգելիչ միջոց՝ COVID-19 վարակի տարածումը դանդաղեցնելու համար:

**Գրավադրված գույքի 2019-20թթ, ապրիլի 10-ին վերջնաժամկետով գույքահարկի տարեկան վճարումների երկրորդ մասի վճարման համար, հարկատուները պետք է կիրառեն վճարման այլընտրանքային եղանակներ, այդ թվում առցանց, հեռախոսով կամ փոստով վճարման տարբերակներ2]:**

«Մենք գիտակցում ենք, որ այժմ բոլորի համար դժվարին ժամանակներ են, և մենք շարունակում ենք հետամուտ լինել հասարակության և մեր աշխատակիցների անվտանգության ապահովման գործին: Մենք կշարունակենք հետևել զարգացումներին, անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կմտցնենք և կտեղեկացնենք ծառայությունների անհատական մատուցման, այդ թվում հարկային վճարումների տեղում ընդունման վերսկսման մասին», ասաց հարկային տեսուչ և գանձապահ Քիթ Նոքսը: «Բացի այդ, հարկատուները կարող են օգտվել մեր կայքէջի միջոցով տրամադրվող ինքնասպասարկման տարբերակներից, այդ թվում՝ վճարման ենթակա հարկի չափի ստուգում, հաշվի կրկնօրինակի հարցում, վճարումների պատմության դիտում:»

Առցանց e-Check վճարումների համար գումար չի գանձվելու: Կրեդիտային/դեբետային քարտերով գործարքների համար մեր քարտային վճարումների համակարգը գանձում է 2.25 տոկոս ծառայության վճար:

Հարկատուները կարող են այցելել <https://ttc.lacounty.gov/>՝ վճարային տարբերակներին և ինքնասպասարկման ծառայությունների փաթեթին ծանոթանալու համար: Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար, հարկատուները կարող են նաև զանգահարել (213) 974-2111:

Հարկատուները կարող են բաժանորդագրվել՝ հարկային տեսուչից և գանձապահից գույքահարկի վերաբերող էլ. նամակներ, ծանուցումներ, տարեկան գույքահարկի վճարման վերջնաժամկետի հիշեցումներ ստանալու, առաջիկա միջոցառումների, գրասենյակների հասցեների փոփոխության և այլ թարմացումների մասին տեղեկանալու համար: Բաժանորդագրվելու համար հարկատուները կարող են այցելել էլ. փոստի ծանուցման ծառայությունը հետևյալ հղումով. [ttc.lacounty.gov/notify](https://ttc.lacounty.gov/notify):